ՆՈՐ ԳՐՔԵՐ

Հ. Խ. ԴԱՐԲԻՆՅԱՆ.— Վ. Ի. Լենինի և բոլշևիկների պայքարը Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման համար (1917—1919 թթ.), «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1974 թ., 214 էջ։

Աշխատության մեջ կոնկրետ-պատմական նյութի հիման վրա ցույց է տրված այն մեծ պայքարը, որ մղել են Վ. Ի. Լենինը և նրա գլխավորած բոլշևիկների կուսակցությունը Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման համար։ Այդ պայքարը, որ սկսվել էր առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Վ. Ի. Լենինը և բոլշևիկներն ավարտի հասցրին 1919 թ., երբ ստեղծվեց Կոմինտերնը, որը հրսկայական դեր խաղաց միջազգային կոմունիստական ու բանվորական շարժման մեջ։

Մերժելով բուրժուական և ռեֆորմիստական պատմաբաններին, աշխատության մեջ ցույց է տրված, որ Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման համար 1919 թ. հասունացել էին բոլոր նախադրյալները, որ Կոմինտերնը դրել է ժամանակակից կոմունիստական շարժման սկիզբը։

Գիրքը առաջին փորձն է հայ ընթերցողներին ծանոթացնելու այն մեծ պայքարի հետ, որ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ մղել է մեր կուսակցությունը՝ բոլոր երկրների հեղափոխական ուժերի համախմբման և Կոմունիստական ինտերնացիոնալի ստեղծման համար։

Բ. Հ. ԱՆԱՆԻԿՅԱՆ.—Դաշնակցության գաղափարական-քաղաքական կուրսը, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1974 թ., 408 էջ։

Մենագրության մեջ բացահայտվում են դաշնակցության սուբյեկտիվ-իդեալիստական հայացքները և նրա հակահեղափոխական, հակասովետական գործունեությունը ու այդ կուսակցության՝ որպես իմպերիալիզմի կամակատարի դերը արդի պայմաններում։ Աշխատության հեղինակը օգտագործել է հայ մարքսիստ-լենինյանների համապատասխան աշխատությունները, բոլշևիկյան մամուլն ու արխիվային նյութերը, սովետական փիլիսոփաների ու պատմաբանների, ինչպես նաև սփյուռքահայ հետազոտությունները։

Գ. Բ. ՋԱՀՈՒԿՅԱՆ.— Գրաբարի քերականության պատմություն, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 1974 թ., 558 էջ։

Գրքում տրված է գրաբարի քերականության XVII—XIX դդ. պատմությունը։ Հեղինակը հետևում է գրաբարի քերականության պատմության այն շրջաբաժանմանը, որ տրված է նրա «Հայոց լեզվի հոլովման սիստեմը և նրա ծագումը» աշխատության մեջ։ Այնտեղ տարբերվում է գրաբարի քերականական կառուցվածքի ուսումնասիրության երեք շրջան՝ 1. Հունատիպ քերականությունների (V դ.—XVII դ. սկզբները), 2. Լատինատիպ քերականությունների (XVII դ. սկզբներից—XVIII դ. 3-րդ քառորդը) և 3. Ինքնատիպ քերականությունների (XVIII դ. վերջին քառորդից մինչև մեր օրերը)։ Այդ շրջաններից առաջինը ներկայացված է հեղինակի «Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V—XV դդ.)» աշխատության մեջ։ Ներկա աշխատությունում քննվում են մյուս երկու շրջանները (երրորդ շրջանը հասցվում է մինչև XIX դ. կեսերը)։

Քերականական աշխատությունների քննությունը կատարվում է երկու ուղղությամբ՝ քերականության տեսական հարցերում դրանց բերած նորությունները և գրաբարի քերականական կառուցվածքի՝ մինչ այդ չբացահայտված փաստերի նկարագրությունը։ Հեղինակն առանձնապես մեծ ուշադրություն է նվիրել Մ. Ջամչյանի, Վ. Ջալբխյան-Ա. Այտրմյանի և Ա. Բագրատունու քերականություններին։

Աշխատությունը հնարավորություն է տալիս ոչ միայն ծանոթանալու հայ քերականագիտական մտքի զարգացման ընթացքին, այլև խորացնելու գրաբարի վերաբերյալ գիտելիքները։

Հ. Մ. ՋԱՆՓՈԼԱԴՅԱՆ.— Դվինի միջնադարյան ապակին IX—XIII դդ., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1974 թ., 76 էջ։

ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի «Հայաստանի հնագիտական հուշարձանները» մատենաշարի այս պրակը նվիրված է Դվինի պեղումներից հայտնաբերված ապակե իրերին, որոնք պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում։ Դվինի ապակեղենի ուսումնասիրությամբ բնորոշվում է ապակեգործական արհեստի զարգացման աստիճանը Հայաստանում IX—XIII դդ.։ Աշխատության մեջ առանձնացված են տեղական ապակեգործության նմուշները, բացահայտված են նրա զարգացման փուլերը և Դվինի առևտրական կապերը։ Գրքի ընդարձակ ներածությունը, ինչպես նաև այլ նյութեր տրված են հայերեն, ռուսերեն և անգլերեն։ «Իրերի կատալոգ» բաժնում նկարագրված են հայտնաբերված ապակյա իրերը, մանրամասն տվյալներ են հաղորդվում դրանց մասին։ Գիրքը հարուստ է գծանկարներով և լուսանկարներով։

Գ. Ե. ՄԽԻԹԱՐՅԱՆ.—Սոցիոլոգիական ուսմունքների պատմություն, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, Երևան, 1974 թ., 226 էջ։

Ուսումնական օժանդակ ձեռնարկի սույն պրակը ընդգրկում է Հին Հունաստանի և Հին Հռոմի առավել աչքի ընկնող սոցիոլոգիական ուսմունքներն ու տեսությունները, ընդհուպ քրիստոնեության ընդհանուր սոցիոլոգիական հիմունքները։ Գրքում հիմնական տեղը գրավում են Դեմոկրիտի, Պլատոնի, Արիստոտելի, Ցիցերոնի, Սենեկայի և այլոց հայացքներն ու տեսությունները։

Աշխատությունը նախատեսված է ոչ միայն ուսանողության, այլև փիլիսոփայության և սոցիոլոգիայի հարցերով հետաքրքրվողների համար։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ.— Պատմութիւն Սեբաստիոյ (աշխատասիրությամբ Բ. Լ. Զուգասզյանի), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1974 թ., 237 էջ։

Միջնադարյան հայ պատմագրության վերջին ներկայացուցիչներից մեկի՝ Հովհաննես Սեբաստացու սույն աշխատության մեջ ժամանակագրական կարգով տրված է Փոքր Հայքի մայրաքաղաք Սեբաստիայի պատմությունը՝ XI դ. սկզբներից մինչև 1830-ական թվականները։ Պատմության համար սկզբնաղբյուր են հանդիսացել հայ պատմիչների գործերը, ժամանակագիրների երկերը, ձեռագիր հիշատակարանները, կոնդակները և այլ նյութեր։

Պատմության հրապարակումով շրջանառության մեջ են դրվում մասնավորապես XVII—XIX դդ. հայոց պատմության նոր ու հետաքրքիր փաստեր։